կեցան Ռակկայ[1] քաղաքում, հաշտութիւն կապելով Ալի Ի. Աբի Տալիբի հետ[2]: Ապա նա նշանակեց Օմար Ի. Աբդուլ Ազիզին, փայտակարանի Նահր Աջիի[3] տիրոջը, իսկ այլք աւանդում են, որ Օմարի օգնականն էր (վերոյիշեալ) Հատիմ Ի. Նուման, բայց այս տեղեկութիւնն հաստատ չէ:

Եզիդ Ի. Աբդուլմալէք (720—724) կառավարիչ կարգեց Միլաք Ի. Սաֆֆար Ալբահրա'ին, որին յետոյ հեռացրեց եւ նորա տեղը դրեց Հարիզ Ի. Ամր Ալթայ'ին. սա յարձակեցաւ Լակզիների վերայ եւ առաւ Համզադան[4] գաւառը:

Ապա Հայաստանում կառավարեց Ջարրահ Ի. Աբդալլահ Ալհակամի[5], Մադհիզ ցեղից, որ նստաւ Պարտաւում: Նա տեղեկացրեց ամիրապետին, որ այստեղ չափի եւ կշիռքի տարբերութիւն կայ եւ հաստատեց հաւասարութիւն եւ ճշտութիւն, շինել տալով Ջ-րր-Ռէ կոչուած չափը, որով մինչեւ օրս Պարտաւի բնակիչք առեւտուր կ'անեն: Անցնելով Կուր գետը, Ջարրահ առաջացաւ, կտրեց Սամուր[6] գետը, մտաւ

[1] Հնոց Kallinikum, յոյնի առեւտրական քաղաք հիւսիսային Միջագետքում Եփրատ գետի վերայ:

[2] Օսմանի խողխողումից յետոյ (656) Ալին՝ իբրեւ Մուհամմեդի յաջորդ՝ իւր թեկնածութեամբ պատճառ եղաւ արիւնահեղ պատերազմի, որ ընդ միշտ երկու հակառակ բանակների բաժանեց իսլամական աշխարհը:

[3] [illegible], այժմ Աջի չայ Ատրպատականում, որ Ուրմիոյ ծովը կը թափի:

[4] Istaxri Համշադան (حمشدان) մեծակը կը դնէ Կասպից ծովի ափին. Շաբարան քաղաքից անմիջապէս հիւսիս. «Նորանից վերեւ տարածւում են Գիլանի եւ Շիրվանի դաշտերը մինչեւ Բակայի, Դերբենդի, Լէկզիների սահմանները եւ երկու գետերի խառնուրդը: Ապա հետեւում են Լիրանի բնակիչք, որոնք շատ ամուր բերդ ունին»:

[5] Որ վերեւում յիշուած է:

[6] السمور կովկասի լեռնային գետերից մէկն է, որ Դերբենդից հարաւ կասպից ծովը կը թափի: